1829–1831 ԹԹ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԻՐԱԿՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐՍԵՑԻ ՎԵՐԱԲՆԱԿՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՇՈՒՐՋ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով, սակայն օգտվել դրա պտուղներից վերջինս չկարողացավ: Սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում կնքված հաշտության պայմանագրով Ռուսաստանին անցան միայն Անդրկովկասի սնծովյան առափնյա շրջանները՝ Անապա, Փոթի նավահանգիստներով և Ախալցխայի փաշայության մի մասը՝ Ախալցխա ու Ախալքալաք ամրոցներով: Արևմտյան Հայաստանում գրավված մյուս ընդարձակ շրջանները՝ արևմտաեվրոպական երկրների ճնշման տակ, վերադարձվեցին Թուրքիային[1]:

Թուրքական լծից ազատվելու արևմտահայության սպասելիքներն այս անգամ ևս չիրականացան: Պայմանագիրը խորը հիասթափության մեջ դրեց մի ողջ ժողովրդի, որ նպաստել էր ռուսական զենքի հաջողությանը և այժմ մենակ մնացել թուրքական վրեժխնդրության առջև: Թուրքական իշխանությունների ընդգծված հայատյացությունը, ինչպես նաև նորանվաճ երկրամասի հավատարիմ տարրով վերակենդանացնելու հրամայականը, առիթ տվեցին ռուսական կողմին պայմանագրի XIII հոդվածի հիման վրա թուրքահպատակ քրիստոնյաների զանգվածային վերաբնակեցում կազմակերպելու: Այն սկսվեց 1830 թ. գարնանը և հակառակ թուրքական իշխանությունների հարուցած խոչընդոտներին՝ Ախալցխայի և Ախալքալաքի գավառներ, Փամբակ-Շորագյալի ուղեմաս, Սևանա լճի ավազան, նաև Ապարանի ու Թալինի մահալներ բերեց մոտ 12300 ընտանիք կամ 78000 մարդ[2]:

Արևմտահայության այդ տեղաշարժը ոչ միայն վերականգնեց Արևելյան Հայաստանի և մասնավորապես նրա հյուսիսային հատվածի բնակչության ժողովրդագրական նախկին հայեցի պատկերը, այլև նպաստեց տարածաշրջանի բնակչության մեջ հայ տարրի զգալի ավելացմանը, ազգային կազմի քանակական աճին ու որակական փոփոխմանը՝ վերածելով Հայաստանի Արևելյան հատվածը հայ ժողովրդի ազգահավաքման օջախի:

Հարցի նման կարևորությամբ միայն կարելի է բացատրել այն լուրջ հետաքրքրությունը, որ հանդես է բերել հայ պատմագրությունը արևմտահայության վերաբնակեցման հարցի նկատմամբ: Դեռևս 2005 թ. Շիրակ գավառի Արևելյան հատվածի XIX դ. առաջին կեսի ժողովրդագրական

---

[1] *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923 թթ.), Երևան, 1972, էջ 73–82:*

[2] *Ա. Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն. Արևմտահայ գաղթականության տեղաբաշխումը Շորագյալի գավառում (Արևելյան Շիրակ) 1829–1831 թթ.– ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 5, Գյումրի, 2002, 153–168:*

պատկերի ուսումնասիրության շրջանակներում մենք ևս անդրադարձել ենք արևմտահայության վերաբնակեցման, գավառի բնակչության էթնոկրոնական պատկերի վրա այդ տեղաշարժի թողած ազդեցության անչափ հետաքրքիր ու կարևոր խնդիրների քննությանը[3]: Այն ժամանակ ձեռքի տակ ունեցած վիճակագրական բնույթի վավերագրերում առկա թերացումներն ու բացթողումները մեզ հնարավորություն չտվեցին այս հարցում լուրջ հաջողությունների հասնելու: Եվ միայն վերջին տարիների մեր ուսումնասիրությունները Հայաստանի Ազգային և Վրաստանի պատմության կենտրոնական պետական արխիվներում այս ուղղությամբ պսակվեցին հաջողությամբ:

Ինչպես արդեն նշեցինք, արևմտահայության զանգվածային վերաբնակեցումը սկսվեց 1830 թ. գարնանը: Սակայն մեծ թվով արևմտահայեր՝ Ռուսաստանում քիչ թե շատ բարեկեցիկ կյանք գտնելու ակնկալիքով, ռուս-թուրքական նորահաստատ սահմանն անցան ու Արևելյան Հայաստանի ռուսահպատակ շրջաններում բնակություն հաստատեցին արդեն 1829 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Սրանց մեջ կարսեցիները կազմում էին 495 ընտանիք և տեղաբաշխվեցին հետևյալ կերպ. փաշայության տարբեր գյուղերից եկած 95 ընտանիք՝ համաձայն Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար Ի. Պասկևիչի՝ Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Պ.Դ. Զավիլեյսկուն ներկայացրած դեկտեմբերի 3-ի զեկուցագրի, գեներալ Ն.Պ.Պանկրատևից անցագրեր ստանալով հաստատվեցին Լոռիում, իսկ կարսեցի արհեստավորների 400 ընտանիք գեներալ-մայոր Բերխման Ա-ի կողմից ուղարկվեցին Գյումրի[4]:

Մինչև գարուն լուծվեցին նաև վերաբնակեցման հետ կապված հարցերը: Կարսեցիները նախընտրեցին հաստատվել Գյումրիում, Շորագյալի, Լոռի-Փամբակի գավառներում և Արագածի ամայի գյուղերում[5]: Ավարտին հասցվեց ռուսական տիրույթներում վերաբնակվել ցանկացողների ցուցակագրումը: Համաձայն Կարսի մարզի ժամանակավոր վարչության պետ՝ գեներալ-մայոր Բերխման Ա-ի 1829 թ. դեկտեմբերի 12-ին Ի. Պասկևիչին ներկայացրած -3119 զեկուցագրի՝ նահանգի 56 բնակավայրերից ռուսական տիրույթներ տեղափոխվելու ցանկություն էր հայտնել 2035 ընտանիք կամ մոտ 12210 մարդ (1 ընտանիքը միջինը 6 մարդ), որոնցից 130 ընտանիքը Կարս քաղաքից, իսկ մնացած 1905-ը՝ 55 գյուղերից: Սրանցից 1703 ընտանիքը ցանկություն էր հայտնել հաստատվել Շորագյալի գավա-

---

[3] *Ա. Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն. Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Գյումրի, 2005:*

[4] Акты, собранные Кавказской Археографической Коммиссией *(³ЫлбхС»п¨՝* АКАК), т. 7. Тифлис, 1878, с. 831.

[5] *Մ. Դ ա ր բ ի ն յ ա ն. Արևմտահայերի 1829–1830 թթ. գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ.– ՊԲՀ, 1974, -2, էջ 94: Ի դեպ, այս շրջանները կարսեցիներով բնակեցնելու ծրագիրն իրականում պատկանում էր Ի. Պասկևիչին, ով դեռևս 1829 թ. հունվարի 5-ին Նիկոլայ Ա ցարին գրած իր նամակում առաջարկում էր. «Ախալցխայի փաշայությունից գաղթեցնել նրան սահմանակից Քարթլի, Թրիալեթ և Սոմխեթ, Կարսի փաշայությունից՝ Փամբակի և Շորագյալի ուղեմասեր ու Հայկական մարզի վերին շրջաններ՝ Արփաչայից մինչև Թալին և վերջապես Բայազետի փաշայությունից՝ Հայկական մարզի այն մասը, որը գտնվում է Արաքսի ձախ ափին» (մանրամասն տե՛ս* АКАК, т. 7, с. 831*):*

ռում, 299-ը Արագածի շրջակա ամայի գյուղերում, իսկ 33-ը՝ Փամբակի գավառում[6] (տե՛ս աղ. 1):

Աղյուսակ 1

Որտեղի՞ց են գալու	Ընտանիք հայ	Որտեղ են հաստատվելու		Ու՞մ ենթակայության տակ են լինելու
		գավառը	բնակավայրը	
Արալխ	20	Շիրակ	Դահարլի	պրապորշչիկ Մարտիրոս Վեքիլով
Փարկիտ	30			
Աստախանա	30	Արագածի շրջակայք	Կարաբուլաղ	
Տայնալխ	20	Շիրակ	Չիրպիլի	պրապորշչիկ Մարտիրոս Վեքիլով
Օլուխլի	25			
Մևրեկ	25			
Տեկոր	20			
Օխչօղլի	20	Արագածի շրջակայք	Քեփենսի	
Բաշ Շորագյալ	35	Շիրակ	Եսաուլ	
Օղուզլի	30	Շիրակ	Ղափլի	գանձարան
Բաշ Քեղիկլար	40	Շիրակ	Սոնգուռլի	գանձարան
Տիքնիս	33	Փամբակ	Բեքանդ	Մուղդուսի Հակոբ Տիգրանյան
Ղարաղալա	22	Շիրակ	Բաշգյուղ	գանձարան
Հաջիվելի	28			Մուղդուսի Գալուստ
Քյուլվերան	40	Շիրակ	Թալիբօղլի	գանձարան
Սորխանլի	13			
Ղզլչախչախ	25	Շիրակ	Քեթի	գանձարան
	20		Իլլի Ղարաքիլիսա	
Աղջաղալա	25	Շիրակ	Քեթի	գանձարան
Ջոչի	20	Արագածի շրջակայք	Շավշայու-ղշլաղ	Մուղդուսի Ավո
	20	Արագածի շրջակայք	Աղջաղալա Վերին	Մուղդուսի Ավո և Բաղդասար
Քեչեբորք	40	Շիրակ	Ղազանչի	թիֆլիսցի Հակոբ
Ջամուշլի	50	Շիրակ	Եգանլար	Մարտիրոս Վեքիլով
Քենակ	30	Շիրակ	Աղին	գանձարան
Աղյուգում	30			
Այաշ-Քեղիկլար	48	Շիրակ	Սոգութլի	գանձարան
Ղարախան	28	Արագածի շրջակայք	Բազարջուղ	գանձարան
Տաշնիկ	23	Արագածի շրջակայք	Աղջաղալա Վերին	գանձարան
Բեքեմ	40	Շիրակ	Սոնգուռլի	գանձարան
Օրթաքյաղիկլար	25	Շիրակ	Բոզդոդան	գանձարան
Բայրախդար	15	Շիրակ	Թավշանղշլաղ	գանձարան
ՈՒզունքիլիսա	20	Շիրակ	Դիրաքլար	գանձարան

[6] *Վրաստանի պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՎՊԿՊԱ), ֆ. 548, ց. 5, գ. 393, թ. 77–80:*

	30	Արագածի շրջակայք	Գյուլաբ	կապիտան իշխան Կ. Ի. Բագրատիոն-Մուխրանսկի
Ինճե-Սու	18	Շիրակ	Բաշգյուղ	գանձարան
	25		Ղութնիղշլաղ	Մուղդուսի Գալուստ
Զարջա (Զուռիձու)	80	Շիրակ	Մահմուդջուղ	գանձարան
Աքրակ (Ագարակ)	28	Արագածի շրջակայք	Գյուլաբի	կապիտան իշխան Կ. Ի. Բագրատիոն-Մուխրանսկի
Ղոշավանք	35	Շիրակ	Ղզլքիլիսա	գանձարան
Արգինա	25	Շիրակ	Փոքր Ղարաքիլիսա	գանձարան
Կալա Օղլի	45	Շիրակ	Հաջինազարդուլի	39-րդ Եգերական գնդի պրապորշչիկ Մակրի-պակի
Իսլամաձոր	35	Շիրակ	Ղանլիջա	
Վիզին քյոյ	30	Շիրակ	Իլլի Ղարաքիլիսա	Գևորգ և Մուղջավո
Կոտանլի Վերին	23	Շիրակ		Մուղդուսի Ավո
Արդոստ	11	Արագածի շրջակայք	Քաստալի	Մուղդուսի Ավո
Իլանլու	19			Տիգրանյան
Չորլու	35	Շիրակ	Բոստանչի խարաբա	գանձարան
Նախչվան	60	Շիրակ	Եգանլար	գանձարան
	60		Ղըրխդագիրման	Հակոբ Մեղեկ օղլի
Սելինիքյոյ	35	Շիրակ	Մոլլա Գյոկչա	գանձարան
Բերնա	28	Շիրակ	Թոմարտաշ	գանձարան
Ղարաքիլիսա	22			գնդապետ Մարգար Աղա
Չիրպյուլի	25	Շիրակ	Մեջիթլի	Մուղդուսի Ավո և Մկո
Բենգլի Ահմեդ	100	Շիրակ	Արթիկ	Մուրադ Հակոբյան, Մուղդուսի Ավո
Փալդրվան	31	Շիրակ	Դուզքենդ	Մարտիրոս Վեքիլով
Ենգի-քյոյ	40	Շիրակ	Օրթաքիլիսա	Հակոբ Մեղեկ օղլի
Զայիմ	42	Շիրակ	Արբիվալի	Հակոբ Մեղեկ օղլի
Թալգաուր	29			
Քուչակ	30	Արագածի շրջակայք	Զանգի-քարվանսարա	Մարտիրոս Վեքիլով
Քերս	34	Շիրակ	Ղուլիջան	թիֆլիսցի Հակոբ
Աղեմբեկ	40	Արագածի շրջակայք	Մելիքքենդ	գանձարան
Կարսից	130	Շիրակ	վերաբնակեցման վայրն անհայտ է	անհայտ է
ընդամենը	2035 ընտանիք կամ մոտ 12210 մարդ (1 ընտանիքը միջինը 6 մարդ)			

Հայերի կողմից վերաբնակների քարավանները առաջնորդելու էին Ստեփանոս արքեպիսկոպոս Խաժակյանը, կարսեցի աղաներ Մուղդուսի Ավոն, Մեծ ու Փոքր Հակոբները, Նազարեթ ու Սարգիս Դիլանյանցներն[7] ու

[7] Դիլանյանց կամ Տիգրանյանց երևելի գերդաստանի Գյումրիում հաստատվելու և այստեղ ծավալած գործունեության մասին մանրամասն տե՛ս Հ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. Կարսի

Մկրտիչ Հարությունյանը[8]: Ռուսական կողմից Կարսի նահանգի հայության վերաբնակեցման պատասխանատու՝ պրիստավ էր նշանակվել պրապորշչիկ Մարտիրոս Վեքիլյանը:

Որպես պարսկահպատակ հայերի գաղթի տրամաբանական շարունակություն՝ արևմտահայության տեղահանումն ու վերաբնակեցումն անդրկովկասյան երկրամասում ընթանալու էր նախօրոք մշակված ծրագրի համաձայն: Թիֆլիսում Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Պ. Դ. Զավիլեյսկու նախագահությամբ ստեղծվեց Գաղթականական կոմիտե, որի պարտականությունն էր նորեկների ընդունման ու տեղավորման հետ կապված հարցերի լուծումը[9]: Կոմիտեն մինչև 1830 թ. գարուն մանրամասն տեղեկություններ հավաքեց պետական ամայի հողատարածությունների վերաբերյալ, ինչպես նաև մշակեց Թուրքիայից քրիստոնյաներին տեղափոխելու և ռուսական տարածքներում վերաբնակեցնելու ընդհանուր կանոնները[10]: Օրինակ՝ վերաբնակեցում կազմակերպող հանձնաժողովին ցուցում տրվեց եկվորներին բնակության նոր տեղեր հատկացնելու ժամանակ նկատի ունենալ նրանց նախկին բնակավայրերի բնակլիմայական պայմանները, բնակեցնել ամբողջական գյուղերով, առանց միմյանցից անջատվելու, այնպես, ինչպես բնակվելիս են եղել մինչ այդ[11]: Այս և այլ կանոնների ըստ ամենայնի կիրառումը մեծ բարդությունների հետ կապված չէր: Սակայն իրականում այն գործնական կիրառություն ունեցավ Շորագյալի գավառի՝ արևմտահայերով համալրված 75 գյուղերից միայն 39-ում, ընդ որում ամբողջությամբ ու անթերի՝ միայն 23-ում[12]: Վերջիններիս վերաբերյալ կարելի է առանց վարանելու ճշտիվ նշել, թե Արևմտյան Հայաստանի ո՞ր նահանգի ո՞ր գյուղից քանի՞ ընտանիք Շորագյալի ո՞ր գյուղում է հաստատվել.

Մնացած 16 գյուղերում վերաբնակեցումը կարգավորող այս կանոնները կիրառվեցին միայն մասնակիորեն: Այսպես, 8 գյուղերում արևմտահայերը տեղավորվեցին ոչ թե համաձայն «գյուղից գյուղ» կարգի, այլ դեռևս ճանապարհին կիսվելով հաստատվեցին տարբեր գյուղերում: Իսկ քանի որ վերաբնակեցման հաջորդ փուլերի ընթացքում այդ գյուղերում կարսեցիներից բացի հաստատվեցին նաև Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից եկածներ, ապա պարզել, թե առաջին եկվորները քանիսն էին, հնարավոր է

նահանգի վարչաժողովրդական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, 2006, էջ 165:

[8] *Կ ր պ է. Կարս քաղաքը, Մոսկվա, 1893, էջ 97:*

[9] АКАК, т. 7, с. 831–832.

[10] *Համաձայն 1819 թ. հոկտեմբերի 22-ի օրենքի՝ վերաբնակիչները վեց տարով ազատվում էին պետական հարկերի և երեք տարով՝ զեմստվային պարտքերի վճարումից (մանրամասն տե՛ս* Д ю л о р ь е. Армяне в 1854 году.– «Кавказ» (Тифлис), 1854, 20 октября, ¹22, с. 332.)*:*

[11] *Ա լ. Ե ր ի ց յ ա ն. Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894, էջ 328:*

[12] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 47, ց. 2, գ. 46, 82, 107, 112, 138, նաև՝ Տեղագրական պատառիկներ. Արևելյան մասն Շիրակա.– □Արևելյան մամուլ□ (Զմյուռնիա), թիվ 17, 1 սեպտեմբերի, 1898, էջ 659, թիվ 19, 1 հոկտեմբերի, էջ 738, թիվ 22, 15 նոյեմբերի, էջ 855–858, թիվ 23, 1 դեկտեմբերի, էջ 889–890, թիվ 24, 15 դեկտեմբերի, էջ 934–935, թիվ 3, 1899, 1 փետրվարի, էջ 109–112, թիվ 5, 1 մարտի, էջ 196–198, թիվ 6, 15 մարտի, էջ 235:*

միայն մասամբ: Օրինակ՝ Կարսի փաշայության Ինջելեր գյուղից եկածները, բաժանվելով երկու մասերի, հաստատվեցին Շորագյալի գավառի Մեծ ու Փոքր (Վերին և Ներքին) Ղանլիջաներում, ընդ որում, վերջինում՝ նույն փաշայության Պեշքիլիսու ագարակից, Դերջանից և Մուշից եկածների հետ համատեղ[13]: Այդ պատճառով էլ ստույգ հայտնի է միայն Մեծ Ղանլիջայում հաստատված ինջելերցիների թիվը[14]: Եթե ինջելերցիների թիվը գոնե մասամբ հայտնի է, ապա նույնը չի կարելի ասել ջոմուշլեցիների մասին, քանզի սրանք հաստատվեցին Շորագյալի գավառի Դուզքենդ (Ախուրյան) և Եգանլար (Արևշատ) գյուղերում, առաջինում՝ Կարսի փաշայության Շահնալարից, Փալդրվանից, Քյուրուկդարայից, երկրորդում՝ Բուիկից եկածների հետ համատեղ[15]:

Նշված 16 գյուղերից ևս 8-ում՝ Բայանդուր, Դահարլի (Գետք), Քյալալի (Նորաբեր), Չիրպիլի (Զույգաղբյուր), Ճլովխանլի, Թոմարտաշ (Վարդաքար), Հայկական Գյոզալդարա (Գեղաձոր), Ղոնախդռան (Շիրակ), արձանագրել ենք արևմտահայերի տեղաբաշխման կարգի խախտման մեկ այլ ձև: Խոսքն այն մասին է, որ եթե առաջին դեպքում միևնույն գյուղից ելածները, դեռևս ճանապարհին բաժանվելով մասերի, Շորագյալի գավառում հաստատվել էին տարբեր գյուղերում, ապա այս անգամ տեղի էր ունեցել ուղղակի հակառակը՝ Շորագյալի գավառի միևնույն գյուղ էին եկել նույն նահանգի միանգամից մի քանի գյուղերից[16]: Ուստի և վերջնական հաշվառման ժամանակ նշվել է Շորագյալի տվյալ գյուղերում հաստատվածների միայն ընդհանուր թիվը:

Այնուամենայնիվ, հնարավոր է հաշվել, թե գավառի նշված 39 գյուղերում Արևմտյան Հայաստանի որ նահանգից քանի ընտանիք է եկել, ինչը մեզ համար առաջնային կարևորության խնդիր է: Այլ է դրությունը արևմտահայերով համալրված մնացած գյուղերում: Սրանցից յուրաքանչյուրում միանգամից հաստատվեցին Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից եկածներ, ընդ որում՝ առանց նախնական հաշվառման, ինչի պատճառով էլ գրեթե անհնար է նշել, թե Շորագյալի տվյալ գյուղերում հաստատվածների ընդհանուր թվից դրանցից յուրաքանչյուրում Արևմտյան Հայաստանի ո՞ր շրջանից քանի՞ ընտանիք է տեղավորվել[17]:

---

[13] Ն. Ն ի կ ո ղ ո ս յ ա ն. Շիրակի գյուղական կյանքից.– «Արարատ», թիվ Է–Ը, էջմիածին, 1904, էջ 692:

[14] ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 86, էջ 299–305:

[15] Ք ա ջ բ ե ր ո ւ ն ի. Հիշողություններ.– «Լումա» (Թիֆլիս), 1903, -3, մայիս-հունիս, էջ 107, ն ո ւ յ ն ի՝ Ալեքսանդրապոլից դեպի Կարին.– «Փորձ» (Տփխիս), -5, մայիս, 1879, էջ 180–182:

[16] Տեղեկագրական պատառիկներ. Արևելյան մասն Շիրակա.– «Արևելյան մամուլ», թիվ 15, 1 օգոստոսի, 1898, էջ 585, 586, թիվ 17, 1 սեպտեմբերի, էջ 657–658, թիվ 22, 15 նոյեմբերի, էջ 757–758, թիվ 24, 15 դեկտեմբերի, էջ 935–936, թիվ 5, 1 մարտի, 1899, էջ 196, նաև՝ ՀԱԱ, ֆ. 47, ց. 2, գ. 37, 70, 121, 153:

[17] Արևմտահայերի վերաբնակեցման ընթացքում թույլ տրված ևս մեկ կոպիտ թերացում կարելի է համարել քաղաքային դասի՝ Շորագյալի գավառում տեղավորվելը: Ստեղծվեց մի պարադոքսալ իրավիճակ, երբ շուրջ 1399 ընտանիք նախկին քաղաքաբնակներ հաստատվեցին մի տարածքում, ուր որևէ քաղաքատիպ բնակավայր գոյություն չուներ (մանրամասն տե՛ս Յ. Գ ե ղ ա մ յ ա ն ց. Ախալցխայից մինչև Անի.– «Փորձ», 1880, №4, ապրիլ, էջ 56):

Այժմ անդրադառնանք Շորագյալի գավառում կարսեցիների ըստ բնակավայրերի տեղաբաշխման հարցին: Ինքնին դժվարին այս խնդրի իրագործումն էլ ավելի է բարդանում ձեռքի տակ եղած պատմական աղբյուրների սակավաթիվ և թերի լինելու պատճառով: Վերջիններս մենք պայմանականորեն բաժանել ենք երկու խմբի. առաջին խմբին պատկանող աղբյուրներում («Արևելյան մամուլ»[18], Ս. Ջալալյան[19], Ս. Էփրիկյան[20], Ղ. Ալիշան[21], «XIX դարակեսի եկեղեցական չափաբերական մատյաններ»[22], մասամբ նաև՝ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»[23]) տրվում են միայն աշխարհագրական տվյալներ, այսինքն՝ նշվում է նորեկների որտեղից լինելն ու Շորագյալի գավառի որ գյուղում հաստատվելը. այսպես, օրինակ, Կարսի նահանգի Ինջե-Սու գյուղից Շորագյալի գավառի Ղութնիղշլաղ (Հովտաշեն) գյուղ[24]: Բայց նմանօրինակ կոնկրետ նշումներ տրվել են գավառի միայն 37 գյուղերում հաստատվածների մասին: Մնացած 38 գյուղերում[25] տեղավորվածներին անդրադառնալիս այդ նույն աղբյուրները բաց են թողնում վերաբնակիչների որտեղից լինելու մասին մանրամասները կամ ուղղակի նշում՝ Արևմտյան Հայաստանի այս կամ այն նահանգից Շորագյալի գավառի այս կամ այն գյուղ. օրինակ՝ Կարսի, Բասենի, և Ալաշկերտի շրջաններից Շորագյալի գավառի Սվանվերդի (Լուսաղբյուր) գյուղ[26]:

Երկրորդ խմբին պատկանող աղբյուրները 1842 թ. կազմված կամերալ ցուցակագրման ձեռագիր մատյաններն են կամ, այսպես կոչված, «О турецких переселенцах» *(«Թուրքական վերաբնակիչների մասին»)[27] ստվարածավալ աշխատությունը, որը, ի հակադրություն վերը նշվածների, շրջանցում է արևմտահայերի որտեղից լինելու և Շորագյալի գավառի որևէ գյուղում հաստատվելու կարևորագույն հարցը՝ շեշտը դնելով միայն թվային տվյալների ներկայացման վրա: Սա իր հերթին թույլ չի տալիս Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներից Շորագյալ տեղափոխվածների քանակի մեջ անել այնքան կարևոր թվային սահմանազատում: Օրինակ՝ ըստ վերոհիշյալ փաստաթղթի 1828–1830 թթ. Շորագյալի գավառի*

---

[18] *Տեղեկագրական պատառիկներ. Արևելյան մասն Շիրակա.– □Արևելյան մամուլ□, 1898–1899:*

[19] *Ս. Ջ ա լ ա լ յ ա ն. Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա-Բ, Տփխիս, 1842–1858:*

[20] *Ս. Է փ ր ի կ յ ա ն. Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա-Բ, Վենետիկ, 1903–1907:*

[21] *Ղ. Ա լ ի շ ա ն. Շիրակ, Վենետիկ, Ս. Ղազար, 1881:*

[22] *ՀԱԱ, ֆ. 47, ց. 1, գ. 659–663, 859, 860, 863, 865, 920–923, ց. 2, գ. 1, 18–23, 37–39, 46–48, 69–75, 79–83, 89–92, 98, 102–115, 120–121, 128–140, 146–158, 195, 201, 225, 237, 415–516, 530, 621, 626, 630, ց. 3, գ. 199, ց. 6, գ. 37, 59, 119, 152, 167, 179, 248:*

[23] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմեցին՝ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, հ. 1–5, Երևան, 1986–2001:*

[24] *Ս. Է փ ր ի կ յ ա ն. նշվ. աշխ., հ. Բ, էջ 68:*

[25] *Շորագյալի գավառի 76 գյուղերից միակը, որն ընդհանրապես վերաբնակիչներով չհամալրվեց Թաթարական Գյոզալդարան էր՝ այժմյան Գեղադիրը (մանրամասն տե՛ս Ա. Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն. Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին, էջ 86):*

[26] *Տեղեկագրական պատառիկներ. Արևելյան մասն Շիրակա.– □Արևելյան մամուլ□, թիվ 6, 15 մարտի, 1899, էջ 239:*

[27] *ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 85, 86:*

Փոքր Ղարաքիլիսա գյուղում հաստատվել է 100 ընտանիք (537 մարդ)[28]: Բայց թե դրանց մեջ կոնկրետ որքա՞ն էին պարսկահպատակներ, որքա՞ն արևմտահայեր և որտե՞ղ էին նախկինում ապրել, փաստաթուղթը լռում է:

Այսպիսին են մեր կողմից օգտագործված աղբյուրների երկու խմբից յուրաքանչյուրի միակողմանիությունները: Այնպես որ, Շորագյալի գավառի տարածքում կարսեցիների տեղաբաշխումը կարելի է նկարագրել միայն այս երկու խմբի աղբյուրների համադրությամբ, ինչն էլ կփորձենք իրագործել:

Եվ այսպես, 1830 թ. վաղ գարնանը վերաբնակեցումը սկսվեց: Կարսի նահանգի քրիստոնյաները առաջինն անցան ռուս-թուրքական սահմանը: Սկսվելով 1829 թ. դեկտեմբերի սկզբին՝ նպաստ չպահանջող 400 ընտանիք Գյումրիում հաստատվելու համար գեներալ-մայոր Բերխմանի կողմից անցագրեր տալու պահից, կարսեցիների տեղաշարժը շարունակվեց երկու-երեք ամիս և համարյա ավարտվեց 1830 թ. ամռան սկզբներին: Արդյունքում՝ շուրջ 2464 ընտանիք՝ երեք փուլով՝ նախ 400 ընտանիք, ապա 1840 ընտանիք և, վերջապես, 224 ընտանիք դեռևս 1829 թ. հունվարի 5-ին ցարին Ի. Պասկևիչի ներկայացրած նախագծի համաձայն տեղավորվեցին Փամբակ-Շորագյալի ուղեմասում, Հայկական մարզում և Թալինի մահալում[29]:

Հետագայում կարսեցի վերաբնակների թվաքանակի պարզաբանման ժամանակ առաջացան որոշ դժվարություններ: Վերջիններիս թիվը տարբեր աղբյուրներում տատանվում էր նվազագույն 2255 ընտանիքից[30] մինչև առավելագույն 2467 ընտանիք[31]: Պատճառը հետևյալն էր: Կարսեցիների հեռանալուց հետո ռուսական կառավարության կողմից նահանգի դաշտերի բերքը հայտարարվեց գնված, այնպես որ նոր բնակավայրերում հաստատվելուց հետո մեծ թվով վերաբնակներ ռուս զինվորների ուղեկցությամբ հետ վերադարձան բերքահավաքի: Պետական պաշտոնական փաստաթղթերում կարսեցիների թվաքանակի մասին նշվում է իրականությանն ավելի մոտ թիվ՝ 2464 ընտանիք կամ մոտ 14500 մարդ, որից 2264 ընտանիքը կամ շուրջ 13935 մարդը տեղավորվեց Փամբակի և Շորագյալի գավառներում, իսկ 200 ընտանիք էլ Հայկական մարզում ու Թալինի մահալում[32]:

Այժմ փորձենք պարզել, թե Փամբակ-Շորագյալի ուղեմաս եկած կարսեցիների ընդհանուր թվից ո՞ր մասը հաստատվեց միայն Շորագյալի գավառում: Արևմտահայերի վերաբնակեցման նախօրեին Շորագյալի գավառում

---

[28] *ՀԱԱ, գ. 86, էջ 339–361, 197–206, գ. 85, էջ 215–223:*

[29] Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830–1870), док. 16. Ереван, 1993, с. 76.

[30] *Նկարագիր գաղթականության հայոց ի Պարսկաստանե ի Ռուսաստան, Մոսկվա, 1832, էջ 103–104:*

[31] *Ա լ. Ե ր ի ց յ ա ն ց. նշվ. աշխ., մաս Ա, էջ 442, Ե. Գ ե ղ ա մ յ ա ն. Պատմական քաղվածքներ, պ. 3, մ. 1, Բաքու, 1909, էջ 819:*

[32] АКАК, т. 7, с. 847.

բացի Գյումրուց[33] կար 280–300 ընտանիք ազգաբնակչությամբ 26 հին ու նոր գյուղ, որից 8-ում կամ առանձին-առանձին, կամ էլ բնիկ շորագյալցիների հետ միասին բնակվում էին Արևելյան Հայաստանի, Վրաստանի և Պարսկաստանի տարածքներից գաղթածները (առավելագույնը 90–100 ընտանիք)[34], իսկ մնացած 18 գյուղում՝ միայն շորագյալցիները: Արևմտահայերի վերաբնակեցման արդեն առաջին փուլի ավարտին, երբ ռուսական տարածքներում հաստատվել էին միայն կարսեցիները, գավառում գյուղերի թիվը հասավ մոտ 6 տասնյակի: Ավելի մանրամասն կարսեցիների տեղաբաշխումը Շորագյալում նկարագրելու համար վերջիններիս նախ բաժանենք երեք խմբի՝ ա. կարսեցիներ, ովքեր հաստատվեցին Գյումրիում, բ. կարսեցիներ, ովքեր հաստատվեցին գավառի արդեն գոյություն ունեցող գյուղերում և գ. սեփական ուժերով գյուղեր հիմնած կարսեցիներ:

Եվ այսպես, 1829–1830 թթ. արևմտահայության զանգվածային այս տեղաշարժը Գյումրի բերեց Կարս քաղաքի գրեթե ողջ քրիստոնյա ազգաբնակչությանը, որն ըստ Կրպեի հաղորդած տվյալների՝ Ստեփանոս արքեպիսկոպոս Խաժակյանի առաջնորդությամբ տեղափոխվել էր 693 ընտանիք կամ մոտ 5000-5500 մարդ[35], և որը մեր կողմից պայմանականորեն նշվում է որպես Շորագյալում հաստատված կարսեցիների առաջին խումբ: Բայց ոչ բոլոր հեղինակներն են կարսեցիների այս թվաքանակի ու նրանց՝ ամբողջությամբ Գյումրիում հաստատվելու հարցում համակարծիք Կրպեի հետ: Հայ պատմագրության մեջ այս հարցի վերաբերյալ ընդունված վարկածի համաձայն, որ առաջ է քաշվել Գյուտ քահանա Աղանյանցի և Եփրեմ Սեթի կողմից, կարսեցիները կազմել են ոչ ավելի քան 600 տուն և սահմանն անցել են ոչ միանգամից, այլ նախապես բաժանվելով երեք մասի[36]: Ավելին, Եփրեմ Սեթի վկայությամբ՝ Գյումրիում հաստատվել էին միայն Կանցի Մարտիրոսի առաջնորդությամբ եկածները, իսկ կարսեցիների այլ երկու խմբեր՝ Մուղդուսի Ավոյի և Ստեփանոս արքեպիսկոպոսի գլխավորությամբ տեղավորվել էին առաջինը՝ Փամբակի Ղարաքիլիսայում, իսկ երկրորդը՝ Շորագյալի Ղփչաղ (Հառիճ) գյուղում[37]: Այնպես որ արդեն 1830 թ. օգոստոսին Կարս քաղաքում, մատենադարանի մի վավե-

---

[33] *Փամբակ-Շորագյալի դիստանցիայի Շորագյալի տեղամասի գյուղական բնակավայրերի 1826–1832 թթ. կամերալ ցուցակագրման ձեռագրերում Գյումրին չկա, թեև գյուղ էր և քաղաքի կարգավիճակ ստացավ միայն 1837 թ.: Պատճառը հետևյալն էր՝ XIX դ. 20-ական թվականների սկզբներից սկսած կառավարական շրջանակներում արդեն կարծիք էր ձևավորվել Գյումրին քաղաքի վերածելու մասին, ուստի և մարդահամար անցկացնելիս բնակավայրը որպես գյուղ չէին դիտարկում (մանրամասն տե՛ս* Т. А к о п я н. Развитие Еревана после присоединения Восточной Армении к России. Сборник документов, 1801–1917 гг. Ереван, 1978, с. 79)*:*

[34] *ՀԱԱ, ֆ. 47, ց. 2, գ. 134, թ. 42–44, Տեղեկագրական պատառիկներ. Արևելյան մասն Շիրակա.– □Արևելյան մամուլ□, թիվ 19, 1 հոկտեմբերի, 1898, էջ 737, թիվ 22, 15 նոյեմբերի, էջ 855, թիվ 23, 1 դեկտեմբերի, էջ 890:*

[35] *Կ ր պ ե. նշվ. աշխ., էջ 56, 97:*

[36] *Գ. ք. Ա ղ ա ն յ ա ն ց. Կարնո գաղթը (1829–1830), Թիֆլիս, 1891, էջ 24–25, Մ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Եփրեմ Սեթը արևմտահայության 1829–30 թթ.-ի գաղթի մասին.– ՊԲՀ, 1997, -2, էջ 292:*

[37] *Մ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 292:*

բազրի համաձայն, մնացել էին ընդամենը 10[38], իսկ ըստ մեկ այլ վավերագրի՝ 50–60 տուն հայեր[39]:

Կարսեցիների թվի և ամբողջությամբ Գյումրիում նրանց հաստատված լինելու վերաբերյալ մենք ունենք մեր առանձնակի կարծիքը. մասամբ համամիտ լինելով Կրպեի հետ՝ մենք ամբողջապես չենք ժխտում նաև Գ. քահանա Աղանյանցի ու Եփրեմ Սեթի վկայությունների ճշմարտացիությունը: Այսպես, ճիշտ համարելով Կրպեի այն հայտարարությունը, թե Կարսից եկածների ընդհանուր թիվը 693 ընտանիք էր կամ մոտ 5000–5500 մարդ, մենք միաժամանակ չենք կարող համամիտ չլինել նաև Գ. քահանա Աղանյանցի և Եփրեմ Սեթի հետ այն հարցում, թե կարսեցիները ռուս-թուրքական սահմանն անցնելու նախօրեին բաժանվեցին երեք խմբի, բայց տեղավորվեցին ոչ թե Ղարաքիլիսայում, Գյումրիում և Ղփչաղում, ինչպես նշում են նրանք, այլ՝ Ղարաքիլիսայում, Գյումրիում և Սոգութլիում, ինչպես գտնում ենք մենք: Այսպիսով, Գ. Աղանյանցի ու Եփրեմ Սեթի հետ մեր ունեցած տարաձայնության գլխավոր պատճառը ոչ այնքան կարսեցիների թվի վերաբերյալ է, որքան Ստեփանոս արքեպիսկոպոսի և կարսեցիների՝ Սոգութլիի փոխարեն Ղփչաղում հայտնվելու մասին: Մեր կարծիքով՝ Ստեփանոս արքեպիսկոպոսը ու նրա կարսեցիները Ղփչաղ չեն մտել: Ստեփանոս արքեպիսկոպոս Խաժակյանը հաստատվել է Գյումրիում և մինչև 1837 թ. մարտի 27-ը կաթողիկոսի հրամանով եղել այստեղ հաստատված արևմտահայերի հոգևոր առաջնորդը[40], ինչի մասին էլ հենց ինքը՝ արքեպիսկոպոսը տեղեկացրել էր 1834 թ. հուլիսի 3-ին Կարնո թեմի նախկին առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսին ուղղված իր նամակով[41]: Ինչ վերաբերում է կարսեցիների՝ Ղփչաղ գյուղում հաստատվել-չհաստատվելուն, ապա նշենք, որ մեր ունեցած տվյալներով 1829–1831 թթ. վերաբնակեցման ողջ ընթացքում Շորագյալի գավառի վերոհիշյալ գյուղում որևէ կարսեցի չի հաստատվել: Գյուղը վերակենդանացել է միայն ի հաշիվ Բասենի Մժնկերտից եկածների[42]: Հետևաբար, կարելի է պնդել, որ կարսեցիների երրորդ խումբը, տեղավորվել է Սոգութլիում[43]:

Այսպիսով, 1829–1830 թթ. ընթացքում Կարս քաղաքից Փամբակի Ղարաքիլիսա, Շորագյալի Գյումրի ու Սոգութլի գյուղեր են տեղափոխվել շուրջ 693 ընտանիք, ընդ որում սրանց մեծագույն մասը՝ մոտ 600 ընտանիք (այդ թվում՝ 150 ընտանիք հույներ)[44], հաստատվել է Գյումրիում, 40 ընտանիք Սոգութլիում, իսկ մնացած 53-ը՝ Ղարաքիլիսայում:

---

[38] *Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Կաթողիկոսական դիվան, թղթ. 74, վավ. 246, էջ 1:*

[39] *Նույն տեղում, թղթ. 66, վավ. 54:*

[40] *Կ ր պ է. նշվ. աշխ., էջ 79:*

[41] *ՄՄ, Դիվան Կարապետ արքեպիսկոպոսի, թղթ. 163 դ, վավ. 1407:*

[42] *ՀԱԱ, ֆ. 47, ց. 2, գ. 108:*

[43] *Տեղեկագրական պատառիկներ. Արևելյան մասն Շիրակա.– □Արևելյան մամուլ□, թիվ 18, 15 սեպտեմբերի, 1898, էջ 737:*

[44] О р е с т Е в и ц к и й. Статистическое описание Закавказского края, с присовокуплением статьи: Политическое состояние Закавказского края в исходе XVIII века и сравнение оного с нынешным. СПб., 1835, с. 152.

Մեր կողմից առանձնացված կարսեցիների երկրորդ խումբը Շորագյալում հաստատվեց արդեն գոյություն ունեցող 26 գյուղերից 17-ում, ընդ որում՝ նրանց քանակի վերջնական հաշվառման ժամանակ (խոսքը գնում է «Արևելյան մամուլի» և Ս. Էփրիկյանի և 1829–32 թթ. կամերալ ցուցակագրման տվյալների մեր կատարած համադրության մասին) պարզվեց, որ նշված գյուղերից միայն 7-ում են կարսեցիները հաստատվել բնիկ շորագյալցիների հետ և կազմում էին 143 ընտանիք կամ 943 մարդ (տե՛ս աղ. 2).

Աղյուսակ 2

Գյուղերը	Ընտանիք	Ար.	Իգ.	Ընդամենը	Որտեղի՞ց են եկել
1. Բանդևան	25	103	93	196	Կիկոռ գյուղից
2. Ղասմալի	14	46	37	83	Քեչե-Պօա գյուղից
3. Թալիբօղլի	17	59	53	112	Քյուլվերան գյուղից
4. Ղութնիղշլաղ	5	22	9	31	Ինձե-Սու գյուղից
5. Դուզքենդ	38	158	169	327	Ջոմուշլու, Շահնալար, Քյուրուկդարա և Փալդրվան գյուղերից
6. Ղուլիջան	34	99	80	179	Քերս
7. Եսաուլ	10	14	1	15	Բաշ-Շորագյալ
ընդամենը	143	501	442	943	

Ինչ վերաբերում է մնացած 10 գյուղին՝ Թաքնալի (Գոգահովիտ), Չրախլի, Փոքր Բեքանդ, Քյավթառլի (Փանիկ), Մեծ Քյափանակ (Մուսայելյան), Իլլի Ղարաքիլիսա (Իլլի), Արթիկ, Ղզբլքիլիսա, Չոռլի և Մահմուդջուղ, ապա սրանցում բնիկ շորագյալցիների ու կարսեցիների հետ միաժամանակ հաստատվեցին Արևմտյան Հայաստանի նաև այլ շրջաններից եկածներ, որի հետևանքով էլ այս գյուղերում հաստատված կարսեցիների ստույգ թիվը պարզելն անհնար է (տե՛ս աղ. 3):

Պարբերաբար կրկնվող այս խնդիրը, մեր կարիծիքով, առաջացավ այն պարզ պատճառով, որ վերաբնակեցման գործընթացն իշխանությունների անփութության պատճառով, սկսվելուց կարճ ժամանակ անց, դուրս եկավ Գաղթականական կոմիտեի վերահսկողության տակից և ընդունեց տարերային բնույթ: Արդյունքում մեծ թվով արևմտահայեր, սահմանն անցնելուց հետո, տեղավորվեցին ոչ թե ըստ վաղօրոք մշակված ծրագրի, այլ ով որտեղ կարող էր: Թերևս միայն այս կերպ կարելի է բացատրել այն փաստը, որ Կարսի նահանգի 46 գյուղերի քրիստոնյա ազգաբնակչությունը Շորագյալի գավառում հաստատվեց ոչ թե 32՝ ինչպես նշված էր Բերխմանի վերը նշված ցուցակում (տե՛ս աղ. 1), այլ 50 գյուղերում[45]: Ավելին՝

[45] *Ի դեպ, նույնը կրկնվեց նաև Էրզրումի նահանգի քրիստոնյա ազգաբնակչության տեղավորման ժամանակ: Համաձայն Գաղթականական կոմիտեի որոշման՝ վերջիններս ամբողջությամբ հաստատվելու էին Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում: Սակայն ավելի քան 1800 ընտանիք (այդ թվում՝ 150 ընտանիք հայ կաթոլիկներ) հասնելով Կարս, վերաբնակեցման վատ կազմակերպված լինելու պատճառով, չկարողացան շարունակել*

Բերխմանի ցուցակում նշված Շորագյալի գավառի 32 գյուղերից 6-ում կարսեցիներ ընդհանրապես չհաստատվեցին: Փոքր Ղարաքիլիսա, Ղափլի, Բաշգյուղ, Հաջինազարդուլի, Մեջիթլի և Արըխվալի գյուղերը համալրվեցին ի հաշիվ Պարսկաստանից, Ալաշկերտից, Մուշից և Խնուսից եկածների[46]:

Աղյուսակ 3

Գյուղերը	Ընտանիք	Ար.	Իգ.	Ընդամենը	Որտեղի՞ց են եկել
1. Թաքնալի	17	51	56	107	Կարսի ու Կարինի վիճակներ
2. Տավշանղշլաղ	27	78	64	142	Կարսի ու Բասենի գյուղեր
3. Հոռոմ	59	167	145	312	Կարս, Կարին, Բայազետ
4. Չրախլի	14	58	37	95	Կարսի Փարգիտ գյուղ, Բասեն և Ալաշկերտ
5. Փոքր Բեքանդ	12	49	39	88	Երևան, Կարս, Մուշ, Ալաշկերտի գյուղեր
6. Քյաֆթառլի	15	52	40	92	Կարս, Ալաշկերտ, Կարին
7. Մեծ Քյափանակ	51	167	96	263	Կարս, Ալաշկերտ
8. Իլլի Ղարաքիլիսա	31	89	71	160	Կարս, Կարին
9. Ղանլիջա Ներքին	14	44	40	84	Կարսի Պեշքիլիսա ագարակ, Ինճելեր, Դերջան, Մուշ
10. Արթիկ	100	334	305	639	Կարսի Բենգլի Ահմեդ, Կանի, Կարնո Կան գյուղեր
11. Ղազարապատ	54	194	28	222	Կարս, Ալաշկերտ
12. Սվանվերդի	42	138	119	257	Կարս, Բասեն, Իլանլու գյուղ, Ալաշկերտ
13. Աղին	28	79	62	141	Կարս, Խնուս, Ալաշկերտ, Սեբաստիա
14. Ղեղաչ	17	50	44	94	Կարս, Ալաշկերտ, Կարին,
15. Ղզլքիլիսա	26	86	68	154	Ապարանի Հաջիգայիր գյուղ, Պողտաշեն, Կարսի Ղոշավանք գյուղ
16. Սոնգուռլի	17	63	31	94	Կարս, Ալաշկերտ
17. Արմութլի	23	62	52	114	Կարսի Թեքնիզ, Վաղի, Ալաշկերտի Տութաղ և Բասենի Եավան գյուղեր

իրենց ճանապարհը դեպի Ախալցխա: Արաքսն անցնելուց հետո նրանցից 200 ընտանիք մեկնեց Փամբակի Մեծ Ղարաքիլիսա գյուղը, իսկ մյուսները հաստատվեցին Շորագյալի գավառում (մանրամասն տե՛ս Գ. Ա ղ ա ն յ ա ն ց. Կարնո գաղթ.– «Արձագանք», Թիֆլիս, 1899, №11, էջ 166–167):

[46] *Այդ մասին տե՛ս Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIX դ.–XX դ. սկիզբ), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, աշխատասիրությամբ՝ Ս. Հայրապետյանի, Երևան, 2011, էջ 27–30:*

18. Մահմուդջուղ	60	212	137	349	Լոռի, Կարս, Բասեն, Ա-լաշկերտ
19. Ղազանչի	52	168	113	281	Կարսի Բաշ-Շորագյալ, Բասենի Պլղասոն գյուղեր
20. Մոլլա Գյոկչա	59	225	146	371	Կարսի Ղզըլ-Չախչախ գյուղ, Բասեն, Խնուս, Ա-լաշկերտ
21. Փոքր Քյափանակ	17	68	50	118	Կարսի և Կարինի վիճակ-ներ
22. Չոռլի	5	19	8	27	Վրաստան, Կարս, Բասեն
23. Նորաշեն	33	93	70	163	Կարսի Քեափաճի, Ջերմուկ գյուղեր, Ալաշկերտ, Դեր-ջան
24. Օրթաքիլիսա	35	109	78	187	Կարս, Կարին
25. Դիրաքլար	31	99	75	174	Կարս, Դերջան
26. Մեծ Քեթի	42	127	88	215	Կարսի Ղըզըլ-Չախչախ գյուղ, Մուշ, Բասեն
ընդամենը	881	2983	2142	5125	

Շորագյալի գավառում հաստատված կարսեցիների երրորդ և վերջին խումբը, այսպես կոչված, նոր գյուղեր հիմնողներն էին, որոնք ռուս-թուրքական սահմանն անցնելուց հետո, Շորագյալի արդեն գոյություն ունեցող գյուղերում հաստատվելու փոխարեն նախընտրեցին հիմնել նորերը (սրանք վերականգնեցին ու հիմնեցին ավելի քան 33 գյուղեր): Հետագայում՝ մինչև 1831 թ. նշված գյուղերից զուտ կարսեցիներով բնակեցված մնացին միայն 17-ը (տե՛ս աղ. 4).[47]

Աղյուսակ 4

Գյուղերը	Ընտանիք	Ար.	Իգ.	Ընդամենը	Որտեղի՞ց են գաղթել
1. Շիրվաջուղ	56	169	152	331	Քաջբերունյաց Ղըզըլ-Ղարա գյուղից
2. Դահարլի	64	183	160	343	Արևմտյան Շիրակից
3. Քյալալի	12	42	32	74	Կարսի վիճակից
4. Բոգդոդան	13	34	36	70	Փոքր Քեղիկլեր
5. Սարիբաշ	8	21	21	42	Վալի գյուղից
6. Եզանլար	34	112	93	205	Ջոմուշլուից ու Բուիկից
7. Բողազքեսան	35	101	82	183	ՈՒղուզլու գյուղից
8. Թոմարտաշ	32	112	90	202	Բերնա և Ղարաքիլիսե գյուղերից
9. Ճզիկլար	24	102	82	174	Քեղիկլեր գյուղից
10. Փոքր Քեթի	18	39	64	103	Ղըզըլ-Չախչախից
11. Բայանդուր	52	165	138	303	Կարսի վիճակից

[47] *ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 85, էջ 1–12, 27–30, 70–73, 81–83, 106–108, 167–176, 259–265, 283–291, գ. 86, էջ 28–36, 45–47, 91–106, 108–114, 218–227, 306–309:*

12.Ղոնախդռան	40	130	95	225	Ենի-Գեոյ, Ջային-Մազիրա և Ղարազան
13. Մեծ (Վերին) Ղանլիջա	23	66	45	111	Ինջելեր գյուղից
14. Չիրպիլի	17	68	48	116	Անիից և հարևան Ճալար գյուղից
15. Ալահքիլիսա	7	22	6	28	Գյուլեյրանից
16. Ղըրխդագիրման	37	107	75	182	Նախչվան
17. Սոգութլի[48]	40	127	113	240	Կարս քաղաք
ընդամենը	512	1600	1332	2932	

Ընդ որում, դրանցից մեկում գրանցվեց գավառի համար աննախադեպ իրադարձություն: Այն ժամանակ, երբ քրիստոնյաների վերաբնակեցումը Թուրքիայի տարածքից ընդունել էր զանգվածային բնույթ, Կարսի փաշայության Գյուլեյրան գյուղից Շորագյալի գավառի Ալահքիլիսա (Բայթար) գյուղում հաստատվեցին 7 ընտանիք թաթարներ (28 մարդ)[49]: Սույն բացառիկ (գոնե Շորագյալի գավառի համար) իրադարձությունը, մեր կարծիքով, ունի միայն մեկ բացատրություն: Շատ հավանական է, որ Ալահքիլիսայում հաստատված այս 7 ընտանիք թաթարները, որոնք, ըստ էության, դարձան այս գյուղի եթե ոչ հիմնադիրները, ապա գոնե վերականգնողները, ոչ վաղ անցյալում ապրել են Շորագյալի գավառի մահմեդական գյուղերից որևէ մեկում, և Կարսի փաշայության տարածքում էին հայտնվել միայն 1825 թ. վերջերին՝ ռուս-պարսկական հարաբերությունների սրման պատճառով Շորագյալի գավառից մահմեդականների արտագաղթի ժամանակ, իսկ ռազմական գործողությունների ավարտից հետո, չհամակերպվելով նոր բնակավայրում ստեղծված պայմաններին, հետ էին վերադարձել:

Նոր հիմնադրված գյուղերից մնացած 16-ում՝ Ղազարապատ (Իսահակյան), Սվանվերդի, Աղին, Ղեղաչ, Սոնգուռլի, Արմութլի, Ղազանչի, Մոլլա Գյոկչա (Մարալիկ), Փոքր Քյափանակ, Նորաշեն, Օրթաքիլիսա, Դիրաքլար, Տաշանդշլաղ, Հոռոմ, Մեծ Քեթի և Փոքր Ղանլիջա, հետագա գործողությունները ընթացան համաձայն արդեն ծանոթ սցենարի: Մինչև վերաբնակեցման ժամկետի պաշտոնական ավարտը սրանցում կարսեցիներից բացի տեղավորվեցին նաև Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից եկածներ, ինչն էլ թույլ չի տալիս հստակություն մտցնել այդ գյուղերում հաստատված ինչպես կարսեցիների, այնպես էլ այլ շրջաններից եկածների թվաքանակի հարցում: Ուղղակի հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղերը հիմնվել են կարսեցիների կողմից, մենք ենթադրում ենք, որ, չնայած հետագա համալրմանը, հիմնադիրներն այստեղ, այնուամենայնիվ, պիտի կազմեին բնակչության նվազագույնը 1/3 մասը: Ի դեպ, այս սկզբունքը կիրառելի է Շորագյալի գավառի բոլոր այն 26 գյուղերի հա-

[48] Սոգութլի գաղթած 74 ընտանիքից 18-ը՝ Սարդարապատից էին, 40-ը՝ Կարսից, իսկ մնացածները՝ Ալաշկերտից, Մուշից և Բասենից (մանրամասն տե՛ս Տեղեկագրական պատառիկներ. Արևելյան մասն Շիրակա.– «Արևելյան մամուլ», 1898, էջ 737):

[49] Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 70:

մար, որոնցում նորեկների առանձին-առանձին հաշվառում չի անցկացվել (տե՛ս աղ. 3):

Ամփոփելով մեր խոսքը՝ նշենք հետևյալը. արևմտահայության վերաբնակեցման առաջին փուլում, երբ ռուսական տիրույթներում հաստատվել էին դեռևս միայն կարսեցիները, Շորագյալի գավառ փոխադրվեց ավելի քան 1549 ընտանիք (մոտ 8330 մարդ), որից 600 ընտանիքը (3600 մարդ) հաստատվելով Գյումրիում՝ դարձավ 1837 թ. հիմնված Ալեքսանդրապոլ քաղաքի ազգաբնակչության կորիզը: Մնացած 949 ընտանիքը (մոտ 4729 մարդ) տեղավորվեց գավառի գյուղերում՝ դրանց թիվը 26-ից հասցնելով 59-ի: Այսինքն՝ միայն կարսեցիների շնորհիվ Շորագյալում հիմնվեց ու «վերակենդանացավ» 33 բնակավայր: Սակայն վերջիններիս տեղաբաշխումը գավառի գյուղերում միակերպ չեղավ: 26 գյուղում Արևելյան Հայաստանի, Վրաստանի, Պարսկաստանի և Օսմանյան կայսրության տարբեր շրջաններից եկածները՝ թվով 881 ընտանիք (5125 մարդ) տեղավորվեցին միասին՝ դրանով անհնարին դարձնելով այդ գյուղերում կարսեցիների ստույգ թվի պարզումը: Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռուս-թուրքական սահմանն առաջինն անցան և այս գյուղերում առաջինը հաստատվեցին կարսեցիները, կարծում ենք, որ նրանք պիտի կազմեին բնակչության 1/3-ից ոչ պակաս՝ մոտ 294 ընտանիք (շուրջ 854 մարդ): Գավառի մյուս 24 գյուղերում, պատկերն ավելի դյուրին էր: Կարսեցիներն այստեղ հաստատվել էին կա՛մ տեղացիների հետ միասին, կա՛մ նոր գյուղեր էին հիմնել և կազմում էին 655 ընտանիք (3875 մարդ):

О ЧИСЛЕННОСТИ КАРССКИХ ПЕРЕСЕЛЕНЦЕВ, ОБОСНОВАВШИХСЯ В ВОСТОЧНОМ ШИРАКЕ В 1829–1831 гг.

АРМЕН АЙРАПЕТЯН

Резюме

Адрианопольский мир, заключенный 2 сентября 1829 г., дал возможность более 12 300 семьям турецкоподданных христиан в надежде на более или менее благополучную жизнь переселиться в русскоподданные районы Восточной Армении. Среди них жители Карса составляли 2464 семьи, которые должны были поселиться в уездах Шорагял и Памбак, отчасти и в Армянском марзе. Однако, спустя короткое время от начала процесса переселения, оно стало стихийным, и многочисленные армяне обосновались не по заранее намеченной программе, а кто где мог. Это, в свою очередь, затруднило пересчет новоприбывших. В Шорагяле распределение жителей Карса проводилось по трем направлениям: а) жители Карса, которые обосновались в Гюмри, б) жители Карса, которые обосновались в уже существующих в уезде селах и в) жители Карса, которые сами основали села. В течение неполного года на территории уезда обосновалось более чем 1549 семей. Из них 600, поселившихся в Гюмри, стали ядром городского населения города Александрополя, основанного в 1837 г. Остальные 949 семьи разместились в 50 селах уезда, при этом в 26 (около 294 семей) – вместе с прибывшими из разных районов Ирана и Османской империи. В остальных

24 селах уезда жители Карса (655 семьи) обосновались или вместе с местными жителями, или в новопостроенных селах.

ON THE AMOUNT OF KARS RESETTLERS CONFIRMED IN EASTERN SHIRAK IN 1829–1831

ARMEN HAYRAPETYAN

S u m m a r y

The treaty of Adrianople made on the 2nd of September gave more than 12.300 Turkish-obedient Christians chances to resettle in Russian-obedient areas of Eastern Armenia with the anticipation of having somehow well-being life. The inhabitants of Kars, among them 2464 families, were to settle in the provinces of Shoragyal and Pambak, partially in the Armenian region as well. But after a short period of the rehabilitation, the process was of spontaneous nature, and a great number of Western Armenians settled not according to the already planned project, but to their needs. This, in its turn, made the registration process of newcomers complex.

The distribution of Kars inhabitants in Shoragyal went into three directions: a. Kars dwellers who settled in Gyumri, b. Kars dwellers who settled in the existing villages of the province and c. Kars dwellers who founded villages with their efforts. In the course of a year more than 1549 families settled in the territory of the province. 600 of them, settled in Gyumri, became the main bulk of Alexandropol (founded in 1837). The rest of 949 families settled in 50 villages of the province, among them 294 families with the population of Eastern Armenia, Georgia, Persia and Ottoman Empire. The inhabitants of Kars in 24 other villages of the province (655 families) had settled either with the natives or had founded new villages.